ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵԱՄ. ԼՈՒՐԵՐ

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՊԱՇՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԾԵՐՈՎԱՆԻ ԱՎԱՆՈՒՄ

Ընթացիկ տարվա օգոստոսի 30-ին, Վրաստանի Ծերովանի քաղաքամերձ ավանում կայացավ Վիրահայոց թեմի քահանայից եւ պաշտոնեության համատեղ ժողովը: Թեմական առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի աղոթքով եւ օրհնության խոսքով բացվեց ժողովը եւ օրակարգի հաստատումից հետո ատենապետությունը ստանձնեց Սամցխե – Ջավախքի Ընդհանուր առաջնորդական փոխանորդ Տեր Բաբգէն աբեղա Սալբիյանը:

Ժողովին իրենց ներկայությունն էին բերել Թբիլիսիի, Բաթումի, Սամցխե-Ջավախքի եւ Քվեմո Քարթլիի հայ համայնքների հոգեւոր հովիվները, Սամցխե-Ջավախքի ընդհանուր փոխառաջնորդության պաշտոնեությունը եւ աշխատակիցները:

Թբիլիսիի, Բաթումի, Սամցխե-Ջավախքի եւ Քվեմո Քարթլիի հայ համայնքների հոգեւոր հովիվների առաքելությունն է հովվել հատկացված համայնքները, հետեւել տեղում վերականգնվող եկեղեցիների շինաշխատանքներին, կազմակերպել բազմաբնույթ միջոցառումներ ժողովրդին եկեղեցուն մերձեցնելու, երիտասարդությանը Աստծու տան շուքը համախմբելու ուղղությամբ, Վիրահայոց թեմի բոլոր հովվություններում անվերապահորեն պահպանել եկեղեցական արարողությունների հաստատված կարգը: Խորհրդակատարությունները, ժամակարգությունները եւ ծեսը կատարել միօրինակությամբ՝ հարազատ Եկեղեցու կանոններին: Իր հովվական գործունեության մեջ հոգեւոր հայրը պետք է հանդիսանա տեղի բնակչության հոգեւոր եւ ազգային լուսավորիչը, ինչպես նաեւ լրատվության միջոցները ավետարանական պատգամների համար օգտագործողը:

Սրբազան Հայրը կարեւորեց եւ անհրաժեշտ համարեց հոգեւոր-եկեղեցական եւ կրթամշակութային աշխատանքների աշխուժացումը Սամցխե-Ջավախքի եւ Ծալկայի առաջնորդական փոխանորդություններում եւ համապատասխան ցուցումներ տվեց տեղում ծառայող հոգեւոր սպասավորներին եւ փոխառաջնորդության պաշտոնեությանը: Սրբազանը գոհունակություն արտահայտեց Բաբգէն վարդապետի կատարած աշխատանքների համար եւ պատրաստակամություն հայտնեց առաջնորդարանի ողջ հնարավորություններով աջակցել Հայր Սուրբի կողմից տարածաշրջանում իրականացվող բազմաբնույթ ծրագրերին:

Թեմի առաջնորդը ներկայացրեց թեմի կառավարման կառուցվածքում մտցված փոփոխությունները, մանրամասնորեն խոսեց նոր կառավարման համակարգով ստեղծված յուրաքանչյուր բաժնի շուրջը: Դրանք են իրավաբանական հարցերով, պետության հետ հարաբերությունների եւ միջկրոնական համագործակցության, մշակույթի, կրթության, երիտասարդության հարցերով, մամլո եւ լրատվության, վարչատնտեսական եւ ֆինանսական բաժինները:

Հընթացս ժողովի ելույթ ունեցան բաժինների ղեկավարները: Իրավաբանական հարցերով, պետության հետ հարաբերությունների եւ միջկրոնական համագործակցության բաժնի տնօրեն Լեւոն Իսախանյանը խոսեց գործող 48 եկեղեցիները, Առաջնորդարանը

եւ «Հայարտուն» կենտրոնը թեմի հաշվեկշռին գրանցելու, ինչպես նաեւ Վրաստանի հայ ազգաբնակչության հաշվառքի մասին: Նույն բաժնի ընկերային ծառայության ղեկավար Միքայել Ավագյանը՝ խոսելով Տեր Հուսիկ քահանա Հարությունյանի հետ կալանավայրերում հայազգի բանտարկյալներին այցելությունների մասին, առաջարկեց այցելությունների ցուցակում ընդգրկել նաեւ տարածաշրջանների համայնքներից կալանավայրերում գտնվողներին, ինչպես նաեւ Թբիլիսիի եւ մյուս հայաբնակ շրջանների բնակչության բուժտուգման բարեգործական գործողություն կազմակերպելու մասին:

Մշակույթի բաժինը, տնօրեն եւ «Հայարտուն» կենտրոնի համակարգող Լեւոն Չիղիլյանի գլխավորությամբ, անցած վեց ամիսներին իրականացրել է 50 միջոցառում: Կենտրոնում գործում են պարային համույթներ եւ երգչախմբեր, վոկալ-գործիքային համույթ, դուդուկի, դհոլի, շախմատի, ֆուտբոլի խմբակներ: Բաժինը մասնակցել է բազմաթիվ փառատոների Մայր հայրենիքում եւ Վրաստանում: Բաժնի պատասխանատուն խոսեց այն մասին, որ ՀՀ մշակույթի եւ Մփյուռքի նախարարությունների, Գ.Գյուլբենկյան հիմնադրամի եւ հոգաբարձուների խորհրդի նյութական միջոցներով շարունակվում են թեմում տարվող մշակութային գործերը: Լ.Չիղիլյանն առաջարկեց շարունակական դարձնել տարածաշրջաններում հոգեւոր-մշակութային միջոցառումները, օժանդակել տեղերում մշակութային խմբեր եւ արվեստի կենտրոններ ստեղծելու գործին:

Իսկ մշակույթի բաժնի գեղարվեստական մասի, ստեղծագործական խմբակների եւ երաժշտական եւ տեխ.սպասարկման ղեկավար Պավլիկ Օգանեզովը ներկայացրեց մշակութային բաժնի նոր նախագծերը եւ առաջիկա ծրագրերը:

Կրթության բաժնի տնօրեն Եվգենյա Մարկոսյանը խոսեց Թբիլիսիում, Բաթումիում եւ Քոբուլեթիում մեկօրյա դպրոցների եւ տեղերում տարվող կրթա-մշակութային աշխատանքների արդյունավետության մասին, առաջարկեց վերապատրաստման դասընթացներին ընդգրկել տարածաշրջանների ուսուցիչներին եւ աջակցել նախակրթարաններ բացելու հայրենանվեր գործին: Խոսեց նաեւ «Հայարտուն» կենտրոնի նախակրթարանի գործունեությունն ընդլայնելու եւ Թբիլիսիի հանրակրթական դպրոցների հետ համագործակցություն ծավալելու մասին: Տնօրենը բարձրացրեց Վրաստանի գործող հայկական դպրոցներում ֆակուլտատիվ եղանակով Հայ ժողովրդի պատմություն առարկայի դասավանդման հարցը: Նա նաեւ զեկուցեց կիրակնօրյա դպրոցների եւ նախակրթարանի աշակերտության համար ՀՀ կրթության նախարարությունից ստացված համապատասխան քանակության գրականության մասին:

Երիտասարդական բաժնի տնօրեն, «Հայարտուն» կենտրոնի հոգեւոր տեսուչ Գեւորգ սարկավագ Անտոնյանը խոսեց լավ երիտասարդ դաստիարակելու համար նրան եկեղեցուն մերձեցնելու կարեւորությունը: Հանդիպումների, անձնական շփումների եւ զրույցների, ուխտագնացությունների միջոցով հասնել երիտասարդներին եկեղեցու շուրջը համախմբելու գործի իրականացմանը: Գեւորգ սարկավագն իր հերթին բարձր գնահատեց ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերով նախարարության հետ համագործակցությունը եւ ստանձնեց Թբիլիսիի հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնի պահպանության եւ խնամքի պատասխանատվությունը:

Մամլո եւ լրատվական գործունեության մասին խոսելով, բաժնի տնօրեն Սուսաննա Խաչատրյանը այն անվանեց թեմի գործունեության հայելի, որի միջոցով ակնհայտ է դառնում ողջ աշխատանքը: Թեմի կայքէջը, որտեղ չորս լեզվով զետեղված նյութերը հասանելի են դարձնում լուրերը, Եկեղեցու խորհուրդները, հոգեւոր հովիվների կենսագրությունները, պատմական եւ գործող եկեղեցիների պատմությունը, նախագծվում են ռադիո եւ հեռուստահաղորդումներ:

Էլեկտրոնային լրատվության ծառայության ղեկավար Վալերի Բաղալյանը տեղեկացրեց, որ պայմանավորվածություն է ձեռք բերվել ընկերություններից մեկի հետ, եւ այսուհետ թեմը

հնարավորություն ունի էլեկտրոնային փոստով ավելի շատ նյութեր ուղարկել հասցեատերերին եւ ներկայացրեց հեռուստահաղորդումներ կազմակերպելու համար պահանջվող տեխնիկայի անհրաժեշտությունը:

Ելնելով թեմի կառավարման կառուցվածքում մտցված փոփոխություններից՝ թեմի ֆինանսական գծով տնօրեն Մարգարիտ Կիրակոսյանը հանգամանորեն բանախոսեց ըստ բաժինների ֆինանսական մուտքերի եւ ելքերի մասին, հավելելով նպատակային նախագծերի վրա աշխատանքը եւ հաշվետվությունները:

Իսկ վարչատնտեսական բաժնի ղեկավար Կարեն Երիցյանը ներկայացրեց Ս. Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցու վերանորոգման ընթացքը, ինչպես նաեւ Շահումյանի «Ս. Աստվածածին» եկեղեցու շինարարության աշխատանքները, տեղեկացնելով, որ արդեն ավարտվել են Փոքր Դաղեթ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու աշխատանքները:

Ժողովին ներկա էին թեմի հետ աշխատող ստեղծագործական միությունների ղեկավարները. Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Ժորա Սնխչյանը, Վրաստանի հայ մտավորականների միության նախագահի պաշտոնակատար Ենոք Թաղեւոսյանը, Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ Մերուժան Շահումյանը, Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միության նախագահ Սուսաննա Խաչատրյանը, Վրաստանի հայ երաժիշտների միության նախագահ Արտեմ Կիրակոզովը:

Ստեղծագործական միությունների ղեկավարները իրենց ելույթներում արժեւորեցին եկեղեցու օժանդակությունը միությունների աշխատանքին, կարեւորեցին վրացական համանուն կազմակերպությունների եւ անհատների հետ համատեղ միջոցառումների իրականացումը: Առաջարկվեց շարունակել շրջաններում միջոցառումների անցկացումը, որտեղ գործնական աշխատանքներ կիրականացվեն հոգեւոր հովվությունների հետ:

Հոգեւոր դասի եւ պաշտոնեության համատեղ ժողովի աշխատանքն ամփոփեց եւ տեղի հոգեւորականներին համապատասխան պատգամներ տվեց Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Ժողովը փակվեց միասնական աղոթքով:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ «ԿՐՈՆԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ. ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ՈՒ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ» ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Գոհունակությամբ ողջունում եւ ձեզ ենք հղում Հայրապետական Մեր օրհնությունը Հայաստանի Հանրապետության քաղաքամայր Երեւանում: Մեծապես գնահատելի է Մեզ համար կրոնական ազատությանն ու դրա մարտահրավերներին նվիրված այս համաժողովի անցկացումը քրիստոնեական հինավուրց մի երկրում, որի ամեն անկյուն ու քար պատված է մարդկային արժեքների եւ ազատության համար մղված պայքարի վկայությամբ:

Այսօր այստեղ հավաքված հոգեւոր այրերի, քաղաքագետների, դիվանագետների եւ լրագրողների պատկառելի ներկայությունը խոսում է արծարծվող թեմայի կարեւորության ու արդիականության մասին: Մեզ համար ողջունելի է նաեւ Եւրոպայի խորհրդի նախարարների խորհրդի կոմիտեում Հայաստանի նախագահության շրջանակներում համաժողովի՝ Հայաստանում անցկացման նախաձեռնությունը: Այն մեծապես պիտի նպաստի Հայաստանի եւ հայ մշակութային ինքնության ներգրավվածությանը՝ Եւրախորհրդի կողմից 2008 թվականին ընդունված «Միջմշակութային երկխոսության Սպիտակ գրքի» մշակմանն ու զարգացմանը, որի արդիականությունն այսօր էլ զգալի է աշխարհում:

«Ապրել միասին, արժանապատվորեն՝ իբրեւ հավասար մարդիկ». այսպես է բացվում Եւրախորհրդի մշակած ու ներկայացրած «Սպիտակ գիրքը», որը նոր հորիզոններ է բացում միջմշակութային եւ միջկրոնական երկխոսության ասպարեզում: Ժամանակակից աշխարհում հաճախ են աղավաղվում հավասարության ու ազատության չափանիշները՝ դրանով իսկ վտանգելով միջմշակութային երկխոսության իրական արժեքն ու կրոնական ազատության ճիշտ ընկալումը, որի հիմնական նպատակն է նպաստել հանդուրժողականությանը, աշխարհում խաղաղությանը, կայունությանն ու բարօրությանը: Անկեղծ հոգով ու մտքեցումով ծնվող երկխոսության մեջ է, որ մշակութային եւ կրոնական ինքնության հավասար դրսեւորումն ուղիղ համեմատական է մերձավորին սիրո ու հանդուրժողականության մեջ տեսնելու ցանկությանը. «Եղբարք, միայն զի ազատութիւն ձեր ոչ լինիցի ի պատճառս մարմնոյ, այլ սիրով ծառայեցէք միմեանց», -բացատրում է Սուրբ Պողոս առաքյալը (Գաղ. Ե. 13):

Զարգացման նոր փուլ թեւակոխած Եւրոպական քաղաքակրթությունը պետք է շարունակի հարգել հնագույն քրիստոնեական արմատներ ունեցող ժողովուրդների մշակութային յուրահատկությունները՝ բազմազանությունը դիտելով որպես համաեւրոպական հարստություն:

Հայ ժողովուրդն ու Հայաստանյայց Եկեղեցին դարեր շարունակ մաքառել են՝ պահպանելու իրենց ուրույն հոգեւոր-մշակութային ժառանգությունը, ունեն կրոնական բազմազանությունն ու հանդուրժողականությունը հարգելու հարուստ եւ պատմական փորձառություն: Յեղասպանություն վերապրած Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության ընթացքում միշտ առաջնորդվել է քրիստոնեական մատենագրության մեջ հրաշալիորեն ձեւակերպված «միութիւն ի կարեւորս, ազատութիւն յերկբայականս» բանաձեւով: Մեզանում նաեւ կարեւորվել է հոգեւոր արժեքների պահպանության եւ մարդկային կյանքում դրանց ամրապնդման համար քույր Եկեղեցիների եւ այլ կրոնների ներկայացուցիչների հետ միասնաբար հանդես գալու հրամայականը, հարգվել են հարեւան ժողովուրդների մշակութային-հոգեւոր յուրահատկություններն ու ազատությունները: Հայոց Եկեղեցու համար հասարակաց է եղել մարդկության ընդհանուր թշնամու՝ մեղքի դեմ պայքարը, երբ հասարակության մեջ գերիշխել է կրոնական անհանդուրժողականությունը, մշակութային-կրոնական թշնամանքը, մարդ անհատի իրավունքների ոտնահարումն ու բռնացումը, հանրային կյանքի բարօր ու ապրվածահաճո ընթացքի խաթարումը: Ավելորդ չենք համարում այստեղ մեջբերելու մեր Եկեղեցու կարկառուն մտածողներից մեկի՝ Ս. Ներսես Լամբրոնացու միտքն այս մասին՝ ձեւակերպված դեռեւս ԺԲ. դարի Կիլիկյան Հայաստանի բազմամշակութային-բազմազգ հասարակության պայմաններում. «Մարտ մեր հասարակաց՝ լիցի առ հասարակաց մեր թշնամին սատանայ, իսկ առ եղբարս՝ հանդարտ ուսաք լինել հանապազ» (Ապենաբանութիւն, էջ 122):

Հայոց Եկեղեցին այսօր էլ շարունակում է ընթանալ այս ոսկե կանոնի գծած ճանապարհով՝ մշտապես իր առաքելությունն իրականացնելով ի խնդիր հասարակաց բարօրության ու մարդկային ապրվածատուր կերպարի պահպանման: Հայ ժողովրդի կյանքում խաղացած իր բացառիկ դերով Հայոց Եկեղեցին այսօր էլ պետք է մնա «կենդանի Ապրծո եկեղեցին, ճշմարտության հաստատությունն ու սյունը» (Ա. Տիմ. Գ. 14): Հասարակական կյանքում Հայ Եկեղեցին իբր նվիրապետություն ու կառույց երբեք միայնակ չի գործել: Հայ հասարակությունն իր դարերի պատմության ընթացքին շնորհներ ու ապրվածատուր պարգեւներ է կուտակել Հայոց եկեղեցում՝ մարդկային հոգեւոր կատարելության ու խիզախության հիացմունքի արժանի գործեր, հայ ժողովրդին անմնացորդ ծառայած սրբերի ու հայրապետների լուսավոր կերպարներ, որոնք այսօր եկեղեցին Ապրծո խոսքի քարոզչությամբ ու իր առաքելության իրականացմամբ պարզապես վերադարձնում է հայ ժողովրդին: Հասարակությունն այսօր Հայաստանում պիտի կարողանա ի պետս վեհագույն նպատակների օգտագործել ազգային-եկեղեցական ավանդությունից մեզ բաշխվող այս շնորհները, ճիշտ գնահատել ու հասկանալ քրիստոնեական անանց արժեքների

վրա կառուցված Հայոց հոգեւոր հայրենիքի փարածական ու բովանդակային կարեւորությունը մերօրյա կրոնական ազատության փորձառության կերտման գործում:

Արդի կրոնական ազատությունը խարսխված է նաեւ միջկրոնական եւ միջեկեղեցական համագործակցության վրա, որին Հայ Եկեղեցին մեծապես ընդգրկված է ամենաբարձր մակարդակով: Մենք սերտ հարաբերություններ ունենք այլ հարանվանությունների հետ՝ ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Էկումենիկ հարաբերությունների զարգացումն Ուղղափառ, Կաթոլիկ, մի շարք բողոքական եկեղեցիների հետ դրա վառ ապացույցն են:

Մեր ցանկությունն է, որ կրոնական ազատության, միջմշակութային երկխոսության եւ հանդուրժողականության վեհ գաղափարներով մեկնարկող այս համաժողովը դառնա եւս մեկ պատեհ առիթ՝ հասարակաց մեր ջանքերը հանուր մարդկության բարօրությանն ու խաղաղությանն ուղղելու համար: Հայրապետական մեր պատգամն ու մաղթանքն է ձեզ՝ համաժողովի հարգելի մասնակիցներ, ջանք ու եռանդ չխնայել՝ նպաստելու եւ միասնական ուժերով ստեղծելու այն լուսավոր հասարակությունը, որտեղ ամենքս կարող ենք ապրել արժանապատվորեն՝ իբրեւ «հավասար մարդկային էակներ»:

Բարի ընթացք Ձեր աշխատանքներին:

ԺՆԵՒՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Սեպտեմբերի 2-ին Ժնեւի էկումենիկ կենտրոնում բացվեց «Զի Ես կենդանի եմ, եւ դուք կենդանի լինելոց էք» (Յովհ. ԺԴ. 19) խորագրով ցուցահանդես՝ նվիրված XX դարի առաջին ցեղասպանությանը՝ Հայոց Մեծ Եղեռնին: Ցուցահանդեսը կազմակերպել էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արխիվը եւ Հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամը՝ աջակցությամբ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի:

Թեմատիկ ցուցավահանակների եւ գրքույկի միջոցով այցելուներին ներկայացվեցին պատմական ամփոփ տեղեկություններ Հայաստանի ու հայ ժողովրդի, հանուն հայրենիքի եւ հավատքի հայոց դարավոր մաքառումների մասին, Հայոց Ցեղասպանության վերաբերյալ արխիվային վավերագրեր եւ լուսանկարներ, համաշխարհային մամուլի էջերում տպագրված հոդվածներ, Եղեռնը վերապրած հայորդիների վկայություններ, Քրիստոնեական Եկեղեցիների պետերի գրություններ, Հայոց Ցեղասպանությունը ճանաչած եւ դատապարտած տարբեր պետությունների եւ միջազգային կազմակերպությունների հայտարարություններ:

Ցուցահանդեսում տեղ են գտել նաեւ առաջին անգամ հրապարակվող արխիվային նյութեր, ինչպես օրինակ՝ Կ.Պոլսի Հայոց պատրիարքի նամակները:

Որպես խոսնակ՝ ցուցահանդեսի բացմանը հրավիրված էին Ֆրանսիայի հայոց թեմի Մարսելի եւ Հարավային շրջանի առաջնորդական փոխանորդ Տ. Մեսրոպ վարդապետ Պարսամյանը եւ ԵՀԽ գլխավոր քարտուղարի տեղակալ դոկտոր Իսաբել Ապավո Փիրին:

Հայոց Ցեղասպանությանը նվիրված նյութերի ցուցադրությունը կտեւի մինչեւ սեպտեմբերի վերջ եւ հետագայում կկազմակերպվի նաեւ այլ երկրներում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

«ԼՈՋԱՆ. ՈՒՂՂԱՓԱՌ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ» ՀԵՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ ԱԼԲԱՆԻԱՅՈՒՄ

Սեպտեմբերի 2-6-ը Ալբանիայի Դյուրեշ քաղաքում գտնվող Ս. Վլաշ վանքում տեղի ունեցավ «Լոզան. Ուղղափառ նախաձեռնության» կողմից կազմակերպված տարեկան հերթական խորհրդաժողովը, որին մասնակցում էին Ուղղափառ եւ Բողոքական եկեղեցիների ներկայացուցիչներ ավելի քան 20 երկրներից: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ խորհրդաժողովին Հայ Եկեղեցին ներկայացրեց Կենտրոնական Եվրոպայի եւ Սկանդինավիայի հայրապետական պատվիրակի պաշտոնակատար Տիրան աբեղա Պետրոսյանը:

Ժողովի մասնակիցներին իր օրհնության խոսքն ուղղեց Տիրանայի, Դյուրեշի եւ Համայն Ալբանիայի Ուղղափառ Եկեղեցու հովվապետ Նորին Ամենապատվություն Անաստասիոս արքեպիսկոպոս Յաննուլատոսը՝ մաղթելով ժողովականներին բեղմնավոր աշխատանք եւ նորանոր հաջողություններ:

Արդեն մի քանի տարի գործող «Լոզան. Ուղղափառ նախաձեռնության» գլխավոր նպատակն է Ուղղափառ եւ Բողոքական եկեղեցիների միջեւ ձեւավորված հարաբերությունների պատմության կառուցողական արտացոլումը, որն իր հերթին պիտի նպաստի փոխհասկացողության պայմաններում Ավետարանի առավել արդյունավետ քարոզչությանը, ինչպես նաեւ եկեղեցիների միջեւ գոյություն ունեցող խնդիրների լուծմանը: Խորհրդաժողովի ընթացքում քննարկվեցին նաեւ ավետարանչության հետ կապված ինչպես պատմական-աստվածաբանական, նույնպես էլ գործնական-հովվական, կանոնական, իրավական, ընկերային եւ այլ հարցեր:

ԷԿՈՒՄԵՆԻԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԲՈՋԵԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Սեպտեմբերի 3-7-ը Իտալիայի Բոզե վանական համալիրում տեղի ունեցավ ուղղափառ հոգեկանությանը նվիրված «Հոգեւոր կյանքի շրջափուլերը» խորագրով 21-րդ էկումենիկ միջազգային կոնֆերանսը, որին ներկա էին 200-ից ավելի աշխարհականներ եւ հոգեւորականներ Ուղղափառ, Արեւելյան Ուղղափառ եւ Կաթոլիկ եկեղեցիներից, տարբեր վանքերից եւ քրիստոնեական կազմակերպություններից: Կոնֆերանսին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ մասնակցում էր Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների ծիսահայեցակարգային հարցերի գրասենյակի պատասխանատու Տ. Զաքարիա վարդապետ Բաղումյանը, որը ներկաներին փոխանցեց Գարեգին Բ. Վեհափառի օրհնությունն ու բարեմաղթանքները:

«Անհնար է պատկերացնել մարդու կյանքն առանց Արարչի հետ հաղորդակցության, որն իմաստավորվում է կենդանի գործերով եւ հավատքի կյանքով: Չնայած Ս. Մկրտությամբ սկիզբ առնող հոգեւոր կյանքը լի է բազում փորձություններով, բայց Տիրոջ օգնականությամբ հաղթահարելի է ամեն ինչ, երբ աներեր հավատ, հույս եւ սեր կա հանդեպ մեր Տերը, որ աշխարհ եկավ մարդկության փրկության համար՝ ցույց տալով երկինք տանող ճանապարհը: Նրան հետեւեցին, Նրանով գոտեպնդվեցին եւ Նրանով զորացան իրենց հավատքի եւ հոգեւոր փորձառության մեջ նաեւ Եկեղեցու Ս. Հայրերը՝ հոգեշահ գրվածքներով կրթելով մարդկանց հոգիներն ու մտքերը»,- ասվում է Հայոց Հայրապետի ուղերձում:

Կոնֆերանսի ընթացքում Տ. Զաքարիա վարդապետ Բաղումյանն առանձին հանդիպում

ունեցավ Բոզեի վանքի հիմնադիր եւ կոնֆերանսի կազմակերպիչ Էնցո Բիանկիի հետ՝ նրան փոխանցելով Վեհափառ Հայրապետի օրհնությունն ու ողջույնները: Հանդիպման ժամանակ անդրադարձ կատարվեց Մայր Աթոռի եւ վանական համալիրի միջեւ ձեւավորված ջերմ հարաբերություններին եւ հետագա համագործակցության ծրագրերին:

Էկումենիկ միջազգային կոնֆերանսի ժամանակ Ս. Գրքի եւ հայրախոսական ժառանգության լույսի ներքո բանախոսներն անդրադարձան հոգեւոր կյանքի առանձնահատկություններին եւ արդի մարտահրավերներին, մասնակիցները նաեւ աղոթեցին Մերձավոր Արեւելքում եւ հատկապես Սիրայում խաղաղության հաստատման եւ ամրապնդման համար:

ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՎԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Ռուբեն Սեւակի անվան թանգարանի բացման արարողությունը:

Ղազարապատ կոչված պատմական շենքում տեղակայված թանգարանում, որ հիմնանորոգվել է ֆրանսահայ Հովհաննես Չիլինկիրյանի ազնիվ բարերարությամբ, ցուցադրվելու են Մայր Աթոռին նրա կողմից նվիրաբերված բացառիկ եւ արժեքավոր շուրջ 200 կտավներ, ինչպես նաեւ՝ նշանավոր նահապետ բանաստեղծ, արձակագիր եւ բժիշկ Ռուբեն Սեւակին պատկանող ածխանկարներ, անձնական իրեր ու փաստաթղթեր, պատմական սրբազան ցուցանմուշներ եւ հայ արվեստի արժեքավոր գործեր:

Թանգարանի բացման արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանները, Հայաստանում, Վրաստանում, Ռուսաստանում եւ Արեւելյան Եւրոպայում Հայ Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ Տ. Ռաֆայել արքեպիսկոպոս Մինասյանը, ՀՀ Մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, ՀՀ Տիյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, կրթության եւ մշակույթի գործիչներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ բարերար Հովհաննես Չիլինկիրյանի կողմից թանգարանի մուտքի ժապավենը կտրելուց հետո ներկաները մուտք գործեցին նորակառույց թանգարան, որտեղ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց օրհնության արարողություն:

Օրհնության կարգի ավարտին բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի թանգարանների եւ արխիվի տնօրեն Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը: Նա ներկայացրեց թանգարանում ցուցադրվող արժեքավոր հավաքածուն, որ ներշնչման կարեւոր աղբյուր պիտի դառնա համայն հայության համար: Այնուհետեւ երախտագիտության խոսք ասաց Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի ռեկտոր տիար Ռուբեն Միրզախանյանը: Վերջինս Ռուբեն Սեւակի անվան թանգարանի բացման համար շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին եւ տիար Հովհաննես Չիլինկիրյանին՝ նշելով, որ այն մշակութային կարեւոր կենտրոններից մեկը կդառնա հայոց կյանքում:

Իր սրտի խոսքն ասաց նաեւ թանգարանի բարերար տիար Հովհաննես Չիլինկիրյանը: «Այսօր մենք հրաշքի ենք ականատես լինում, որովհետեւ այս սուրբ հողի վրա վերակենդանացավ ու անմահացավ 1915 թ. Մեծ եղեռնի նահատակ, մեծանուն բանաստեղծ Ռուբեն Սեւակի հիշատակը», - նշեց Ռ. Սեւակի եղբորորդին՝ իր ուրախությունը հայտնելով Վեհափառ Հայրապետին թանգարանի ծրագիրը կյանքի կոչելու առիթով: Տիար Հովհաննես Չիլինկիրյանն Ամենայն Հայոց Կաթողիկոսին փոխանցեց նաեւ Ռուբեն Սեւակի դուստր Շամիրամ Սեւակի երախտագիտությունը եւ ջերմ շնորհավորանքները:

Ս.Գրքեր Նվիրվի մեծիտա բաղեգարարի վերնագրի բացումին

Արարողության ավարտին ներկաներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Այս թանգարանի հիմնումը հարգանքի տուրք եւ խոնարհում է ինչպես Ռուբեն Սեւակին, նույնպես եւ Գրիգոր Զոհրապին, Սիամանթոյին, Վարուժանին, Կոմիտասին, մեր մյուս մեծերին, մեկ եւ կես միլիոն մեր անմեղ զոհերին, ովքեր ջուրացան իրենց հավատքն ու հայրենիքը եւ ընդունեցին նահատակության պսակը: Նրանք նահատակվեցին իրենց սրտում վառ պահելով փեսիլքը, որ ապրելու եւ հարատեւելու է հայ ժողովուրդը: Թանգարանը նվիրվում է Հայոց Ցեղասպանության 100-ամյա տարելիցի ոգեկոչմանը եւ ունի առանձնահատուկ նշանակություն: Այն այցելուների միջոցով վերածվելու է դողանջող անլռելի զանգակատան, որի ձայնը լսելի պիտի լինի աշխարհում՝ նպաստելով Ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված ջանքերին:

Թանգարանը դառնում է անցյալի, ներկայի եւ գալիքի մեջ անմահության ձայն, մահվանից վերածնվելու, նորից հառնելու եւ կյանքով հաղթելու ուղի: Այսօր մենք ոճրագործությանը պատասխանում ենք մեր ժողովրդի ազնիվ զավակի ու նահատակի հիշատակը հավերժացնելով, կործանմանը պատասխանում ենք կառուցումով, ավերմանը՝ վերաշինությամբ, մահվանը՝ կյանքով: Չարին բարիով պատասխանելու քրիստոնեական այս ոգին դարձել է մեր ժողովրդի նկարագիրն ու էությունը, որը միշտ զորացնելու է մեզ՝ ապրելու եւ արարելու: Ինչպես մեր նահատակ մեծ բանաստեղծ Ռուբեն Սեւակն է ասել՝ «...ո՛վ որ Կեանքին հաւատքն ունի՝ երկինքէն բռնուելիք չուան մ՚ունի: Ո՛վ որ Յաղթութեան յոյսն ու Երջանկութեան սէրն ունի՝ ան իր ուսերուն վրայ երկու թեւեր ունի ...»», - ասաց Նորին Սրբությունը:

Իր խոսքում Ամենայն Հայոց Հայրապետը բարձր գնահատանք հայտնեց մեծարգո տիար Չիլինկիրյանին՝ սիրահոժար հանձնառության, նախանձախնդիր ոգու եւ ազնիվ բարերարության համար: «...Իրականացավ տարիների Ձեր երազը, մեծարգո բարերար, ազգիս սրբություն սրբոց Սուրբ Էջմիածնում, Ղազարապատի պատմական կառույցում հաստատվեց Ռուբեն Սեւակի թանգարանը, որը Վազգեն Կաթողիկոսի կողմից կառուցված Հայոց Ցեղասպանության հուշարձանի հետ, իբրեւ խնկարկում՝ լուսավոր է պահելու Եղեռնի նահատակների հիշատակը, մեր արդար դատը պաշտպանելու ոգին եւ մեր ժողովրդի անմահության խորհուրդը», - նշեց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունն իր օրհնությունը բերեց նաեւ թանգարանի բացման աշխատանքներում իրենց ներդրումն ունեցած բոլոր անձերին, ապա աղոթքով բարի եւ արդյունավոր ընթացք մաղթեց թանգարանի առաքելությանը:

ԱՎՍՏՐԻԱՅԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՅՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Սեպտեմբերի 15-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց մի խումբ ավստրիացի ուխտավորների՝ գլխավորությամբ ավստրիական «Ֆուրխե» քրիստոնեական շաբաթաթերթի հիմնադիր եւ հրատարակիչ պրոֆեսոր Հայնց Նուսբաումերի:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց ուխտավորներին՝ ընդգծելով, որ նման ուխտագնացությունները սքանչելի առիթ են ճանաչելու քրիստոնեական այլ երկրներն ու եկեղեցիները, ինչպես նաեւ զորացնելու քրիստոնեական եղբայրական հարաբերություններն ու փոխհամագործակցությունը: Նորին Սրբությունը ուխտավորներին ծանոթացրեց նաեւ Հայ Եկեղեցու պատմությանն ու դարավոր հոգեւոր փորձառությանը, ներկայացրեց Մայր Աթոռի ներկայիս գործունեությունը կրթական, ընկերային

եւ քարոզչական ոլորտներում: Միաժամանակ Վեհափառն անդրադարձավ Հայ Եկեղեցու առջեւ ծառացած ժամանակակից մարտահրավերներին:

Իր խոսքում Նորին Սրբությունը նշեց նաեւ, որ առանձնակի քաղցրությամբ է հիշում Ավստրիան եւ նրա բարեսեր ժողովուրդին, իր հոգում կրում է այնտեղ իր ապրած եւ ուսանած, ինչպես նաեւ հովվական ծառայության տարիների ազդեցությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց ուխտավորների հարցերին, որոնք վերաբերում էին Հայ Եկեղեցու մասնակցությանը կրոնական, միջեկեղեցական ու էկումենիկ երկխոսություններին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱՐԱՆ ՀԱՄԱՐԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ Ս. ՎԱՐԴԱՆ ՁՕՐԱՎԱՐԻ ՄԱՍՈՒՆՔԸ ՇՆՈՐՀԵՑ Ս. ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ

Կիրակի, Սեպտեմբեր 15, 2013, Հայաստանեայց Եկեղեցւոյ փառաւոր տօներէն Ս. Խաչի Վերացման տօնին առիթով՝ Նիւ Եորքի Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ: Նոյն ատեն նշուեցաւ երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ կատարուած Ս. Վարդան Մայր Տաճարի օծման 45-ամեակը:

Պատարագիչն ու քարոզիչ էր Թեմական առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան: Ս. Խորանին կը սպասարկէին Ս. Վարդան Մայր Տաճարի լուսարարապետ Հոգշ. Տ. Մամիկոն վրդ. Քիլէճեան, ինչպէս նաեւ Մայր Տաճարի սարկաւագներն ու Ս. Ներսէս Ընծայարանի սաները:

Այս հանդիսաւոր օրուան առիթով ներկայ էին Գերշ. Տ. Եղիշէ արք. Կիզիրեան, ՄԱԿ-ի մօտ Հայաստանի հանրապետութեան մնայուն եւ լիազօր դեսպան Տիար Կարէն Նազարեան եւ իր ազնիւ Տիկինը, Առաջնորդարանի Թեմական խորհուրդի անդամներ, ազգային եւ մշակութային կազմակերպութեանց ներկայացուցիչներ եւ յոգնախուռն հաւատացեալներ: Երգեցողութիւնը կատարեց Մայր Տաճարի դպրաց դասը՝ ղեկավարութեամբ խմբավար Խորէն Մէյիսանէճեանի:

Նորին Սրբազնութիւնը իր քարոզին մէջ նախ անդրադարձաւ օրուան տօնին եւ ապա արտայայտուեցաւ Նիւ Եորք քաղաքի սրտին վրայ կառուցուած գեղակերտ Ս. Վարդան Մայր Տաճարի մասին, որ եղած էր սերունդներու երազը եւ իրականացած կարգ մը ազգայիններու վճռակամութեան, տեսիլքին եւ յանձնառած մեծ զոհողութեանց շնորհիւ: Ս. Վարդան Մայր Տաճարը, 45 տարի եւրք, ահա դարձած է հայ հաւատացեալին «ազգային տունը», եւ որ կը հոգատարէ մեր հոգեւոր կեանքն ու կը պահպանէ կրօնական ու ազգային աւանդութիւնները: Սրբազան Հայրը իր խորին շնորհակալութիւնը յայտնեց Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի, որ այս առիթով Ս. Վարդան Ջօրավարի մասունքը շնորհած է Ս. Վարդան Մայր Տաճարին: Աւելի քան 1500 տարուան մասունքը, քարի մասնիկի մը վրայ դրոշմուած Ս. Վարդանի արիւնը, զետեղուած է արծաթեայ ձեռակերտ ու խիստ ճաշակաւոր մեծ խաչի մը կեդրոնի «աչքին» մէջ: Այս մասունքը, անցեալ Օգոստոսին, Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ մասնաւոր արարողութեամբ մը Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ սրբագործուած է:

Ապա, Առաջնորդ Սրբազան Հայրը ըսաւ որ Ս. Պատարագի ընթացքին աղօթքով եւ երախտագիտութեամբ պիտի յիշուին անունները Մայր Տաճարի մահացած կնքահայրերուն եւ այն բոլոր ազգայիններուն՝ որոնք նիւթական կամ բարոյական օժանդակութեամբ իրականութեան վերածեցին երկար տարիներու այս երազը:

Յաւարտ Ս. Պատարագի, առաջնորդութեամբ Ս. Ներսէս Ընծայարանի տեսուչ Արժշ. Տ. Մարտիրոս Ա. քհնյ. Չեւեանի եւ մասնակցութեամբ Վարդանանց ասպետներու կազմակերպութեան չորս անդամներուն՝ Ս. Վարդան Ջօրավարի մասունքը բերուեցաւ Եկեղեցւոյ կեդրոնը՝ ուր տեղի

ունեցաւ անդաստանի արարողութիւնը, որմէ ետք խաչը զետեղուեցաւ եկեղեցւոյ դասին մէջ, եւ հաւատացեալները հերթով եկան ու երկիւղածութեամբ համբուրեցին Հայ Ժողովուրդի մեծագոյն հերոս Ս. Վարդանի մասունքակիր խաչը:

Առաջնորդարանի Հայկ եւ Ալիս Գավուքճեան շքեղ հանդիսասրահին մէջ, աւելի քան 200 անձերու մասնակցութեամբ, տեղի ունեցաւ դարեդարձի ճաշկերոյթը: Պատուոյ սեղանի վրայ տեղ գրաւած էին Թեմական Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արք. Պարսամեան, Գերշ. Տ. Եղիշէ արք. Կիզիրեան, Հոգշ. Տ. Մամիկոն վրդ. Քիլէճեան, Ս. Արժշ. Տ. Մարտիրոս Ա. քհնյ. Չեւեան, դեսպան Տիար Կարէն Նազարեան եւ իր ազնիւ Տիկինը, Փրոֆ. Մարք Մովսէսեան, կազմակերպիչ յանձնախումբի համաստենապետներ Փօլ եւ Պրրթա Զաքեան եւ օրուան հանդիսավար Արփինէ Բարսեղեան:

Բացման աղօթքը արտասանեց Գերշ. Տ. Եղիշէ արք. Կիզիրեան: Կազմակերպիչ յանձնախումբի համաստենապետ Փօլ Զաքեան կենաց առաջարկեց բոլոր անոնց համար՝ որոնք իրենց մասնակցութիւնը բերած են Ս. Վարդան Մայր Տաճարի երազի իրականացման: Հանդիսավար Արփինէ Բարսեղեան հրաւիրեց օրուան գլխաւոր խօսողը՝ Փրոֆ. Մարք Մովսէսեան, որ պատմականը ըրաւ 45-ամեայ Ս. Վարդան Մայր Տաճարին, որ իր ոսկեայ գմբէթով բոլորին կողմէ տեսանելի պատմական կառոյց մըն է Նիւ Եորք քաղաքի կեդրոնը: Գեղարուեստական յայտագիրին իրենց մասնակցութիւնը բերին ջութակահար Սամի Մերտիկեան եւ դաշնամուրահար Ռիքօ Տիկումա: Ս. Վարդան Հայ դպրոցի ուսանողներ կատարեցին հայերէն արտասանութիւններ: Դեսպան Տիար Կարէն Նազարեան իր խօսքին մէջ ըսաւ որ ընդհանրապէս Հայաստանեայց Եկեղեցին եւ մասնաւորաբար Ս. Վարդան Մայր Տաճարն են որ կը խնամեն եւ կը պահպանեն հոգեւոր եւ ազգային աւանդութիւնները: Գնահատանքով արտայայտուեցաւ Գրշ. Տ. Խաժակ արք. Պարսամեանի արդիւնաւոր ծառայութեան մասին եւ շնորհակալութիւն յայտնեց որ Հայաստանի Հանրապետութեան անկախութենէն ետք՝ ՄԱԿ-ի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնը հիւրընկալեց Առաջնորդարանի յարկէն ներս եւ մեծապէս նեցուկ կանգնեցաւ եւ կը շարունակէ աջակցիլ դեսպանատան առաքելութեան յաջողութեան:

Իր խօսքին մէջ Առաջնորդ Սրբազան Հայրը նախ շնորհակալութիւն յայտնեց կարգադիր յանձնախումբի անդամներուն, յայտագիրին մասնակցողներուն եւ ներկաներուն:

Այս պահուն ցուցադրուեցաւ Առաջնորդարանի Հաղորդակցութեան բաժանմունքի անդամ Արթը Պետրոսեանի կողմէ պատրաստուած ժապաւէն մը՝ Ս. Վարդան Մայր Տաճարի մասին՝ ցուցադրութեան ընկերացող Առաջնորդարանի Հաղորդակցութեան բաժանմունքի պատասխանատու Քրիս Զաքեանի ձայնագրուած պատմական տեղեկութեամբ:

Առաջնորդութեամբ Գերշ. Տ. Եղիշէ արք. Կիզիրեանի՝ «Հայր Մեր»ի երգեցողութեամբ վերջ գտաւ Ս. Վարդան Մայր Տաճարի օծման 45-ամեակի ճաշկերոյթը:

ԴԻՒԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՁԵՌԱԲ ՕԾՎԵՑ ՄՈՍԿՎԱՅԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ Ս. ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Սեպտեմբերի 16-ին Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Մոսկվա, ուր սեպտեմբերի 17-ին Նորին Սրբության հանդիսապետությամբ օծվեց Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի նորակառույց առաջնորդանիստ եկեղեցին եւ կատարվեց առաջնորդանիստ եկեղեցական համալիրի բացման արարողությունը:

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի կյանքում պատմական այս իրադարձությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, առաջնորդանիստ համալիրի կառուցման

բարերարները, այս առիթով Հայ Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերից Մոսկվա ժամանած թեմական առաջնորդներ եւ բարերար հայորդիներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, ՀՀ պետական այրեր, գիտության, կրթության մշակներ, մշակույթի անվանի գործիչներ, Ռուսաստանի Դաշնության եւ մայրաքաղաք Մոսկվայի իշխանությունների ներկայացուցիչներ:

Արարողությանն իր մասնակցությունը բերեց նաեւ Նորին Սրբություն Կիրիլ Ա. Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքը՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգեւորականության ուղեկցությամբ:

Արարողությունն սկսվեց հանդիսավոր թափորով, որով Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Խորհուրդ խորին» շարականի երգեցողության ներքո առաջնորդարանից եպիսկոպոսների, Մայր Աթոռի միաբանների եւ թեմի քահանայից դասի կողմից առաջնորդվեց դեպի նորակառույց սուրբ տաճարը: Օրհնելով ներկա բազմահազար հայորդիներին՝ Վեհափառ Հայրապետը բարձրացավ խորան, ուր սկսվեց շքեղակառույց առաջնորդանիստի օծման արարողությունը:

Հընթացս սրբազան արարողության սաղմոսերգության ներքո եկեղեցականները ջրով եւ գինով լվացին տաճարի Սուրբ Սեղանը եւ օծվելիք սյուները, ապա Հայոց Հայրապետը Սրբալույս Մյուռոնով օծեց եկեղեցու Սուրբ Սեղանը, իսկ Սրբազան հայրերը՝ չորս ավետարանիչների անունով խորանի սյուները եւ եկեղեցու մնացյալ տասը սյուները: Օրհնելով նորակառույց եկեղեցին՝ Նորին Սրբությունն այն անվանեց Ս. Պայծառակերպություն եկեղեցի:

Օծման արարողության ավարտին Ս. Խորան բարձրացվեց Մայր Աթոռում պահվող Տիրոջ Ս. Խաչափայտի մասունքից մի նշխար՝ ամփոփված մասունքարան-խաչի մեջ, որը Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից այս նշանակալի առիթով ընծայաբերվեց նորաօծ Ս. Պայծառակերպություն եկեղեցուն՝ ի զորացումն թեմի հավատացելոց հոգեւոր կյանքի: Եկեղեցուն նվիրաբերվեց նաեւ գեղեցկազարդ կանթեղ:

Ս. Սեղանի վրա Ս. Խաչի մասունքի զետեղումից հետո Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանն անդրադարձավ այս եկեղեցու կարեւորությանը ռուսահայության կյանքում, ապա հանուն թեմի թեմական խորհրդի, հոգեւորականաց դասի եւ բարեպաշտ հայորդիների՝ շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին եկեղեցու կառուցման ողջ ընթացքում Ս. Էջմիածնի եւ Հայոց Հայրապետի կողմից ցուցաբերվող մշտական զորակցության եւ հրաշակերտ տաճարի օծման համար: Այնուհետեւ հայրապետական իր օրհնությունը ներկա բարեպաշտ ժողովրդին բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ առ Բարձրյալն Աստված գոհաբանությամբ անդրադառնալով ռուսահայոց հոգեւոր կյանքում կարեւոր այս հանգրվանի նշանակությանը:

Նորին Սրբությունը հորդորեց հայորդիներին զորավոր պահել իրենց հավատքը, եկեղեցասիրության եւ ազգասիրության ոգին, միշտ հաստատուն քայլերով բանուկ պահել ճանապարհը դեպի այս սուրբ եկեղեցին, որտեղ բաշխվող Տիրոջ շնորհներն ու զորությունը ուժ եւ կորով պիտի տան ամենքին՝ սրտերում կրելու լուսեղեն պատգամները մեր Տեր Հիսուս Քրիստոսի, ապրելու աստվածահաճո ընթացքով, հաղթահարելու մեր ժամանակների մարտահրավերները եւ մշտապես հավատարիմ մնալու հայրենական ժառանգությանն ու սրբազան արժեքներին:

Բերկրաշատ այս առիթով Վեհափառ Հայրապետը մասնավոր երախտագիտություն հայտնեց Մոսկվայի եւ համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքին, ինչպես նաեւ Ռուսաստանի Դաշնության եւ Մոսկվայի քաղաքային իշխանություններին՝ եղբայրական սիրով ռուսահայության հոգեւոր-ազգային կյանքի զորացմանն ու առաջընթացին սատարելու համար:

Նորին Սրբությունն իր օրհնությունն ու բարձր գնահատանքը բերեց եկեղեցու բարերարներին՝ Հայոց Եկեղեցու հանդեպ իրենց որդիական սիրո եւ նախանձախնդրության համար, ինչպես նաեւ թեմական եւ եկեղեցական համայնքային վարչությանց բարեջան անդամներին, հոգեւոր դասին եւ եկեղեցու կերտմանը կարեւոր մասնակցություն բերած բոլոր անձանց:

Գեղեցկակերտ եկեղեցու օծման առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր մասնավոր

գնահատանքը հայտնեց Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդին եւ ի գնահատություն նրա նվիրյալ եւ նախանձախնդիր ծառայության Եզրաս Սրբազանին շնորհեց Արքության պատիվ եւ նրա կուրծքը զարդարեց եպիսկոպոսական պանակով:

Վերջում Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ Բարձրյալն Աստծո օրհնությամբ շենանան եւ զորանան Հայաստանն ու Ռուսաստանի Դաշնությունը, Տիրոջ հոգեւոր լույսով պայծառանան երկու եկեղեցիները, եւ հավետ ամուր լինի հայ եւ ռուս եղբայր ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

Խոսքի ավարտին Նորին Սրբությունը Կիրիլ Պատրիարքին, ՀՀ նախագահին եւ ԼՂՀ նախագահին ընծայեց եկեղեցու օծման առիթով հրատարակված Ս. Գրիգոր Տաթեւացու ձեռագիր Ս. Ավետարանի կրկնօրինակումը:

Այս ուրախալի առիթով իր շնորհավորանքի եւ օրհնության խոսքն ասաց նաեւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիոց Կիրիլ Պատրիարքը: Նորին Սրբությունն անդրադարձավ հայ եւ ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությանը, ինչպես նաեւ եկեղեցաշինության մեծ կարեւորությանը՝ ի խնդիր աղոթական ոգու, Աստված-մարդ հարաբերությունների զորացման եւ հոգեւոր արժեքների ամրապնդման:

Ամենայն Հայոց Հայրապետի կողմից թեմի համար կարեւոր այս իրադարձության առիթով նաեւ վաթսուներեք անձանց, իբրեւ Ս. Պայծառակերպություն առաջնորդանիստ եկեղեցու բարերարների, Սրբատաք կոնդակներով շնորհվեցին Հայ Եկեղեցու «Ս. **Գրիգոր Լուսավորիչ**» եւ «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշաններ: Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ շքանշաններ հանձնվեցին Սամվել Կարապետյանին եւ Վլադիմիր Յակունինին:

Եկեղեցու օծման արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը եւ արարողությանը մասնակից հայրդիներն ու հյուրերն այցելեցին առաջնորդարանի դահլիճում բացված «Հայերը Մոսկվայում. պատմական ուղի» ցուցահանդեսը, շրջեցին նորաբաց համալիրի կառույցներում: Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիոց Պատրիարքը կատարեցին բացումը համալիրի տարածքում գտնվող Սիրո եւ եղբայրության հուշաղբյուրի՝ նվիրված հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամությանը:

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԺՆԵՎՈՒՄ ՍԻՐԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սեպտեմբերի 18-19-ը Ժնեւի Բոսեի էկումենիկ դպրոցում տեղի ունեցավ խորհրդակցություն Սիրիայի խնդիրների վերաբերյալ՝ կազմակերպված Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի կողմից, որին իրենց մասնակցությունը բերեցին ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի, Սիրիայի եւ Իրաքի ներկայացուցիչները: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ որպես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչներ խորհրդակցությանը մասնակցեցին ԵՀԽ Գործադիր կոմիտեի անդամ Տ. Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը եւ Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդ Տ. Արմաշ եպիսկոպոս Նալբանդյանը:

Խորհրդակցության արդյունքում ժողովականներն արձանագրեցին, որ Սիրիայի ճգնաժամը չի կարող լուծվել ռազմական ճանապարհով եւ հարկ է, որ միջազգային հանրությունը պատասխանատվություն ստանձնի բռնությունների կասեցման համար՝ ձեռնարկելով խաղաղության հասպատմանն ուղղված միջոցներ:

Հանդիպման ժամանակ նաեւ կոչ արվեց Եկեղեցիների առաջնորդներին՝ միջնորդել պետությունների ղեկավարներին՝ ջանքեր գործադրելու Սիրիայում խաղաղության վերահաստատման համար:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 20-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Տ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ ՀԵԵՄ ընդհանուր հոգեւոր պատասխանատու, ԱՄՆ Հայոց Արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի գլխավորությամբ, տեղի ունեցավ Հայ Եկեղեցու Երիտասարդաց Միավորման ներկայացուցչական ժողովի ընդլայնված նիստ:

Ժողովին մասնակցում էին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հայաստանյան 12 թեմերի երիտասարդաց միությունների ներկայացուցիչներ, ՀԵԵՄ հոգեւոր պատասխանատու Տ. Եղիշե վարդապետ Ավետիսյանը եւ կենտրոնական գրասենյակի տնօրեն Գեւորգ Մկրտչյանը, «Լուսավորչի կանթեղ» եկեղեցասիրաց միության հոգեւոր պատասխանատու Տ. Դերենիկ աբեղա Սահակյանը, Արարատյան Հայրապետական թեմի երիտասարդաց միությունների հոգեւոր պատասխանատու եւ «Արարատ» երիտասարդաց միության հոգեւոր հովիվ Տ. Պետրոս քահանա Մալյանը:

Ժողովի սկզբում ներկաներին Վեհափառ Հայրապետի հայրական օրհնություններն ու բարեմաղթանքները փոխանցեց Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը: Նիստին նախ քննարկվեցին ՀԵԵՄ 2014 թ. Պատգամավորական 3-րդ ժողովի նախապատրաստական աշխատանքների իրականացմանն առնչվող հարցեր: Ժողովի կազմակերպման նպատակով որոշվեց ստեղծել Գործադիր մարմին, որի կազմում են ՀԵԵՄ հոգեւոր պատասխանատու Հայր Եղիշեն, «Լուսավորչի Կանթեղ» միությունից՝ Հայր Դերենիկը, «Արարատ» միության հոգեւոր հովիվ Տ. Պետրոս քահանան, ՀԵԵՄ կենտրոնական գրասենյակի տնօրեն Գեւորգ Մկրտչյանը, բուհերի հոգեւոր պատասխանատու Գեղամ սարկավագ Ավետիսյանը, «Արարատ» միության ատենապետ Տիգրան Հարությունյանը:

Ժողովը քննարկեց նաեւ Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ՀԵԵՄ միջոցառումների կազմակերպական հարցերը՝ հիմնականում անդրադառնալով ապրիլի 23-ին Ծիծեռնակաբերդի բարձունքում մատուցվելիք Ս. Պատարագի արարողությանը: Ծրագրի մանրամասների քննարկման համար որոշվեց առաջիկայում գումարել թեմերի երիտասարդաց միությունների ատենապետերի ներկայացուցչական ժողով:

Նիստի ընթացքում քննության առնչվեցին ՀԵԵՄ կանոնադրությանն առնչվող հարցեր: Կանոնադրության ամբողջացման եւ լրամշակման համար որոշվեց ստեղծել քննական հանձնաժողով հետեւյալ կազմով՝ Գեւորգ Մկրտչյան, Գուրգեն Սիմոնյան, Տիգրան Հարությունյան, Միքայել Պողոսյան եւ Լիանա Խաչատրյան: Հանձնաժողովի լրամշակած ՀԵԵՄ կանոնադրության վերջնական տարբերակը կներկայացվի ՀԵԵՄ 3-րդ Պատգամավորական ժողովի հաստատմանը:

Ժողովի օրակարգում էին նաեւ ՀԵԵՄ անդամների եւ Երեւանի ու մարզերի համալսարանների ուսանողների միջեւ համագործակցությանն ուղղված ծրագրեր: Ժողովականները կարեւոր նկատեցին ուսանողների մասնակցությունը հոգեւոր միջոցառումներին, երիտասարդաց միություններում կազմակերպվող տարաբնույթ հոգեւոր հանդիսություններին, որը ուսանողներին հաղորդակից կդարձնի եկեղեցական ծեսերին ու խորհուրդներին, կնպաստի քրիստոնեական արժեհամակարգի ընկալմանը:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԶՈՎՎԱԾ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սեպտեմբերի 22-ին Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում Սուրբ եւ Անմահ Պատարագից հետո, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց խաղաղության աղոթք Սիրիայի եւ հոգեհանգստյան պաշտոն Սիրիայում զոհված բազում քրիստոնյաների համար:

Մինչ արարողության սկսվելը, ներկա գտնվող հավատացյալներին իր խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը մասնավորաբար ընդգծեց, որ Սիրիան հայ ժողովրդի համար հարազատ երկիր է, ուր հայ ժողովրդի բազում զավակներ հարյուրամյակներ առաջ եւ հատկապես Հայոց Ցեղասպանությունից հետո ապաստան են գտել եւ հնարավորություն ստացել ազատորեն կազմակերպելու իրենց հոգեւոր-մշակութային կյանքը, եկեղեցիների կամարների ներքո կերտելու իրենց պայծառ ու շեն կյանքը:

Խոսելով ներկայիս Սիրիայում ստեղծված դժվարին կացության եւ սիրիահայ համայնքի կարիքների մասին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ասաց. «Մենք հորդոր եւ հրավեր ենք բերում ձեզ, սիրելի՛ հայորդիներ, որպեսզի ըստ ամենայնի զորակցություն բերեք կարիքի մեջ գտնվող ձեր եղբայրներին ու քույրերին: Մենք հրավիրում ենք ձեզ նաեւ առատացնելու ձեր մշտական աղոթքը, որովհետեւ ձեր աղոթքը միխթարություն պիտի պարգեւի նրանց, միաժամանակ պիտի զորացնի նրանց հոգին՝ հաղթահարելու այդ դժվարությունները եւ խաղաղ ժամանակների հույսով ապրելու, որպեսզի կարողանան պահպանել այն ժառանգությունը, որ մեր հայրերը կերտել են Սիրիայի օրհնյալ երկրի մեջ»:

Մաղթելով, որ Բարձրյալ Տերն Իր սիրո ու ողորմության մեջ պահի համայն աշխարհը եւ ողջ մարդկությունը՝ Նորին Սրբությունը աղոթեց նաեւ հակամարտության ընթացքում զոհված բազում քրիստոնյաների համար՝ միաժամանակ հայցելով, որ Աստված երկնային լուսեղեն հարկերում ընդունի նրանց հոգիները եւ միխթարություն պարգեւի նրանց հարազատներին ու մերձավորներին:

«Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆ՝ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Սեպտեմբերի 30-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կատարուած Ալէք եւ Մարի Մանուկեան Գանձատան «Կառ եւ Էմմա Սողոյեաններ» ձեռագիր մատեանների ցուցասրահի բացման արարողութեան ժամանակ տեղի ունեցաւ շքանշանի յանձնման մասնաւոր արարողութիւն: Հայրապետական Սրբատառ կոնդակով Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Ներսէս Շնորհալի» պատուոյ բարձր շքանշան շնորհուեց Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տաթեւ արքեպիսկոպոս Ղարիբեանին՝ քահանայագործութեան հիսնամեայ յոբելեանի առիթով:

«Սիրելի Սրբազան, շուրջ հինգ տասնամեակ, որպէս հոգեւոր սպասաւոր Քրիստոսասէր մեր ժողովրդի, Ձեր կարողութիւններն ի սպաս էք դնում յանուն մեր Սուրբ Եկեղեցու Աստուածաշնորհ առաքելութեան արդիւնաւորման: Այսօր ուրախ ենք արձանագրելու, որ նախնեաց սուրբ հաւատքն ու աւետարանական ճշմարտութիւնները քարոզելու աստուածահաճոյ գործին ծառայել էք հաւատարմօրէն, ջերմեռանդութեամբ եւ ամենայն նուիրուածութեամբ:

Գնահատարժան է հոգեւոր ծառայութեան Ձեր ուղին: Աւարտելով Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Վարժարանի ուսումնառութեան շրջանը եւ քահանայական ձեռնադրութիւն ստանալով Ամենապատիւ Տ. Եղիշէ արքեպիսկոպոս Տէրտէրեան պատրիարքի կողմից, ծառայութեան անցաք Ժառանգաւորաց Վարժարանում որպէս փոխտեսուչ՝ անձնուէր ջանքեր բերելով յօգուտ հոգեւորականաց երիտասարդ սերունդի պատրաստութեան պատասխանատու գործի: Ապա 1966 թուականից սկսեալ շուրջ մէկ եւ կէս տասնամեակ սպասաւորութիւն իրականացնելով Կորդոբայում՝ անխոնջ քարոզչութեամբ ու անձնդիր ծառայութեամբ զօրացեալ պահեցիք մեր ժողովրդի զաւակաց հաւատը, եկեղեցասէր ու ազգասէր ոգին՝ առաջնորդելով առ Բարձրեալն Աստուած: Դուք երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի ձեռամբ արժանացաք եպիսկոպոսական ձեռնադրութեան եւ Սուրբ Օծման՝ արդէն իսկ կարգուած լինելով իբրեւ առաջնորդ Բրազիլիայի Հայոց թեմի, որտեղ Ձեր քաջալերանքով ու նախաձեռնութեամբ իրագործուեցին բազում եկեղեցաշէն ու ազգանուէր ծրագրեր՝ կենդանի ու զօրաւոր պահելով հայորդեաց ազգային եւ եկեղեցական կեանքը, որի ականատեսն ենք եղել նաեւ մենք՝ յընթացս Հարաւային Ամերիկա կատարած Հովուապետական Մեր այցելութիւնների», - ասուած է Հայրապետական կոնդակում:

Շնորհաւորելով Տաթեւ Սրբազանին քահանայագործութեան յոբելեանի առիթով՝ Նորին Սրբութիւնը նրա կուրծքը զարդարեց «Սուրբ Ներսէս Շնորհալի» շքանշանով եւ մաղթեց քաջառողջ ու արեւշատ կենաց օրեր՝ Տիրոջ Սուրբ Աջի հովանու ներքոյ շարունակելու իր առաքելութիւնը՝ նորանոր եկեղեցաշէն ու ազգօգուտ յաջողութիւններ արձանագրելով ծառայութեան մէջ:

Տաթեւ արքեպիսկոպոսն իր երախտագիտութիւնը յայտնեց Հայոց Հովուապետին բարձր գնահատանքի համար եւ իր հաւատարմութիւնն ու սէրը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդէպ:

Պարգեւաբաշխման արարողութիւնն աւարտուեց «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողութեամբ:

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԲԱՑՈՒԵՑ «ԿԱՌԼ ԵՒ ԷՄՄԱ ՍՈՂՈՅԵԱՆՆԵՐԻ» ՁԵՌԱԳԻՐ ՄԱՏԵԱՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՍՐԱՀԸ

Մեպտեմբերի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ալէք եւ Մարի Մանուկեան Գանձատանը, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցաւ «Կառլ եւ Էմմա Սողոյեաններ» ձեռագիր մատեանների ցուցասրահի բացման արարողութիւնը:

Հայ Եկեղեցու բարերար տիկին Էմմա Սողոյեանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին է ընծայաբերել քսաներկու ձեռագիր մատեան եւ հայերէն առաջին տպագիր Աստուածաշունչը՝ ի յիշատակ իր հոգելոյս ամուսին Կառլ Սողոյեանի:

Տէրունական աղօթքից եւ շարականի եգեցողութիւնից յետոյ տիկին Սողոյեանը հատեց ցուցասրահի մուտքի ժապաւէնը, որից յետոյ Վեհափառ Հայրապետի գլխաւորութեամբ հիւրերը մուտք գործեցին նորաբաց ցուցասրահ:

Այս առիթով ներկաներին ողջունեց Մայր Աթոռի Թանգարանների եւ Արխիւի տնօրէն Տ. Ասողիկ քահանայ Կարապետեանը: «Այսօր այս ձեռագրերը ցուցադրութեան են դրուում Սուրբ Էջմիածնում, որպէսզի ամէն ձեռագիր՝ որպէս սրբութիւն եւ անբարբառ բարեխօս, շարունակի բարեխօսել այս ընտանիքի համար եւ մանաւանդ Կառլ Սողոյեանի հոգու հանգստութեան

եւ տիկին Սողոյեանի կենաց արեւշատութեան համար», - իր խօսքում նշեց Տէր Ասողիկը՝ երախտագիտութիւն յայտնելով նաեւ Վեհափառ Հայրապետին՝ հայ հոգեւոր մշակոյթի աշխարհասփիւռ նշխարները խնամքով հաւաքելու եւ Մայր Աթոռում մէկտեղելու համար:

Այնուհետեւ իր ջերմ ապրումներն ու զգացումները ներկաներին փոխանցեց նաեւ տիկին Էմմա Սողոյեանը:

Արարողութեան աւարտին տիկին Էմմա Սողոյեանին իր օրհնութիւնը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Գոհունակութիւն ենք յայտնում, որ Տէրը մեզ պարգեւում է այսպիսի ազնուահոգի զաւակներ, ովքեր իրենց կեանքի ընթացքում ջանասիրութեամբ հաւաքած մեր հոգեւոր արժէքները պատրաստակամ ոգով եւ սիրով ընծայաբերում են ազգային հաստատութիւններին», - ասաց Հայոց Հայրապետը՝ ընդգծելով, որ այլեւս իրականութիւն է դարձել բարերար հայորդու բաղձանքը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նուիրական հարկի ներքոյ ինչպէս հայ, այնպէս էլ օտար հանրութեանը պատճաշօրէն ներկայացուելու են տասնեակ տարիների ընթացքում նրա կողմից հաւաքուած ձեռագրերը:

Վերստին իր գնահատանքը յայտնելով Սողոյեան ընտանիքին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Տիրոջ օրհնութիւնը, ողորմութիւնն ու առատ շնորհները հեղուեն ազգային մեր կեանքից ներս եւ հովանի լինեն մեր ժողովրդին՝ առաջնորդելով դէպի խաղաղ եւ բարօր կեանքի օրեր:

Նորաբաց սրահում բացի ընծայուած ձեռագրամատեաններից ցուցադրւում են նաեւ որոշ բացառիկ փաստաթղթեր Մայր Աթոռի արխիւից, որոնց թւում են նաեւ Կ.Պոլսի Հայոց Պատրիարք Տ. Ջաւէն արքեպիսկոպոս Եղիաեանի գաղտնի փաստաթղթերը՝ կապուած Հայոց ցեղասպանութեան հետ, ինչպէս նաեւ վերջինիս գրութիւնն ուղղուած Տ.Տ. Գեւորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ապրիլի 24-ը Հայոց Ցեղասպանութեան յիշատակի օր հաստատելու վերաբերեալ:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

«ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ» ՇՔԱՆՇԱՆԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ

Էդուարդ Ավետիսյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արմեն Գարսլյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արմեն Ղուկասյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Սողոմոն Հարությունով (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Էդիկ Հարությունյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Վահրամ Կարապետյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արմեն Կարապետյան (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արմեն Ղուկասյան (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Ռաֆիկ Եթումյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Գարեգին Գրիգորյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Զարինե Գասպարյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Գրիգոր Գասպարյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Սիմոն Բախչինյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Ռուբեն Աղանբեգյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)

Արթուր Արզումանովը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արշալույս Մեհրաբյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արմեն Անանիկյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արման Ջիլավյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Անդրեյ Ակիմովը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Ալեքսանդր Ալավերդյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արտակ Արարատյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արմեն Փառլաքյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Յուրի Արտյուխովը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Ռայներ Վիլը (Գերմանիայի թեմ)
Կոնստանտին Գոլաշչապովը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Այհան Թուրանսոլուն (Գերմանիայի թեմ)
Իգոր Արիլգազիեւը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Սենտի Ջաքրիքօղլու-Էրտողանը (Գերմանիայի թեմ)
Աշոտ Խաչատրյանցը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Իգոր Ջավադովը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արթուր Քոչարովը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Վլադիմիր Յակունինը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Հրանտ Սահակյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Իգոր Սագիրյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արմեն Ջիլավյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Մարտին Պետրոսյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Աշոտ Պետրոսյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Գագիկ Շահգիլդյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Գոռ Նահապետյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Ալեքսանդր Քոչարովը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)

ՕՐՎՆՈՒԹՅԱՆԸ ԳՐԵՐԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՅԵԼ

ՀԲԸՄ Սիդնեյի մասնաճյուղը (Ավստրալիայի թեմ)
Մայթլ Փանոսյանը (ԱՄՆ Արեւելյանը թեմ)
Տաթեւ քհն. Հարությունյանը (ԱՄՆ Արեւմտյանը թեմ)
Արմեն Դավթյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Մարատ Հովհաննիսյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արեգ Հարությունյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արարատ Հակոբյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Սերգեյ Կերսելյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Գրիգոր Կետցյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Կարեն Կարապետյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Լեոնիդ Կարախանովը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Դավիթ Կագրամանյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Գոռ Կարգիմանյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Գարեգին Թոռունյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Ալեքսանդր Եվդոկիմովը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Էրիկ Մեհրաբյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)

Էդվին Գեորգյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Գարիկ Գալուստյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Գագիկ Ավետիսյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Միխայիլ Ավագովը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Կարեն Ավագումյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Վարդան Ավագյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Կարեն Աղաջանյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Սերգեյ Ակոպովը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Աղասի Ալեքյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Կոնստանտին Թեւոսովը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Ջեւան Չելոյանցը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արման Ազարյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Կարեն Օգաջանովը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Գարուն Քոչարյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Վլադիմիր Տեր-Ավանեսովը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Կոնստանտին Վարդանովը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Վարդան Վարդանյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արտյոմ Սիրունյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արմեն Սիմոնյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արամ Սաղաթելյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Ռոբերտ Մարտիրոսյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Պյոտր Չիտիլախովյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Արամ Մանուկյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Ռուբեն Չախմապչյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Սուրիկ Շահգիլդյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Գեորգ Ներսիսյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Դեյվիդ Յակուբովը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Հովհաննես Միրզոյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Նարեկ Մինասյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Ղազարոս Մեհրաբյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Կարեն Մեհրաբյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Ռուբեն Քոթանջյանը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)
Վլյաչեսլավ Սահակովը (Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմ)

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ